



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՅՐՍ.

Հոգեմաշ ցատով ամենայն գիշեր
ես քուն եմ՝ մոնում՝ արտասուքն աչքիս,
ես խոտն երամով տանջող սրտակերներ
Շուտ պաշարում են տառապեալ հոգիս...
Մենակ ապրեցայ կարօտ գգոսանքի,
փորձով ես ուսայ խորհուրդը կեանքի,
Օրըս սեւացաւ այրող կրքերից,
Չըզրուայ երբէք մի սիրտ կարեկից:

Եւ քուն եմ՝ մոնում՝ ամենայն գիշեր
Արտասուքն աչքիս, հոգեմաշ ցատով —
Հանգիստ չեն տալիս սեւ սեւ պատկերներ,
Որ պաշարում են ինձ խոտն երամով...
Եւ ահա դու ես որ ինձ այդ պահուն
Երեւում ես, մայր, պտակով զարդարուն,
Դու գրկում ես ինձ սիրով կաթոգին,
Գոչում ես՝ «որդի» ծայնով անմեկին:

Եւ տեսնում եմ ես քո փշեայ պըսակ,
Խոցերով ծածկուած քո սիրուն ճակատ,
Եւ մի թափանցիկ նուրը շղարշի տակ՝
Կուրծքիցդ հոսող արիւնը կաթ կաթ:
Աչքդ աղերսալիւ տեսնում եմ վերայ,
Կանչում եմ քեզ «մայր» ես ծայնով նըսգ,
Եւ կրկին ելնում անքուն վշտահար —
Ախ, մայր, ինչ անէ որդիդ քեզ համար...:

Յ. ՅՈՂԱՆՆՈՍԵԱՆ.



ՊԱՐԹԵՒՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե Ի

ՆՐԱՆՑ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՑ.

(250 Զրիտոսից առաջ — 226 Զրիտոսից յետոյ)

(Շարունակութիւն)

Սինատուրկեսին յաջորդեց իւր որդի Քրաստէս (Հրատ) Գ. 70 թուակ. Քր. առաջ, Այս թագաւորն էլ անուշադիր թողեց Տիգրանի եւ Միհրդատի 69 թ. իրեն ուղղած օգնութեան կոչը, շնայելով որ հայոց կողմից իբրեւ օգնութեան վարձ առաջարկուած էին Միջագետքը, Ադիաբէնէն եւ 70 միծ հովիտները, այսինքն այն ըզրոր երկիրները, որ խլուած էին մի ժամանակ պարթեւներից: Քրաստէսը ոչ միայն չօգնեց Տիգրանին, այլ դաշն կոեց հըռովմայեցիների հետ միջնորդութեամբ Լուկուլոսի ուղարկած դեսպանների. քայց երբ այդ դաշնադրութիւնը վերջնականապէս հաստատուելու համար Լուկուլոսը ուղարկեց Նոքա մօտ Սիստինուսին, պարթեւաց թագաւորը սկսեց կասկածել հոռովմայեցոց անկեղծութեան վերայ, որովհետեւ Սիստինուսը Նոքան աւելի լրտես երեւեցաւ քան թէ դեսպան: Վերջապէս յարմարագոյն համարեց նա չէզոք մնալ: Պոմպէոսը դեռ չհասած պատերազմի դաշտը դ'սշն կոեց Քրաստէս Գ-ի հետ նոյն պայմաններով, որ առաջարկում էին Միհրդատն ու Տիգրանը. քացի դրանից Պոմպէոսը որդեց պարթեւաց թագաւորին յարձակումն գործելու Հայաստանի վերայ: Դրա համար այդ միջոցին մեծ յարմարութիւն եւա կար, որովհետեւ Տիգրանի որդի եւ գահակից կրտսեր Տիգրանը իւր հօրից թաժանուել էր եւ փախել պարթեւների մօտ ապաստանել: Քրաստէս նրան շատ լաւ ընդունեց, ամուսնացրեց իւր աղջկանց մէկի հետ եւ նրա առաջնորդութեամբ մի արշաւանք ձեռնարկեց դէպի Հայաստան 66 թ.: Ժերոնի Տիգրանը փախաւ դէպի լեռները. պարթեւները հասան մինչեւ Արտաշատ եւ պաշարեցին քաղաքը, քայց որովհետեւ պաշարումը երկարեց, ուստի Քրաստէսը յետ դարձաւ իւր զօրաց մի մասը թողնելով կրտս-

սեր Տիգրանի մօտ: Սա միայնակ չէր կարող իր հօրը դէմ դնել: մի կատարեալ պարտութիւն կը ելուց յետոյ փախաւ Պոմպէոսի մօտ, որ պատրաստուում էր Հայաստան մտնելու: Հայր Տիգրանը անպայման անձնատուր եղաւ Պոմպէոսին եւ հակառակ իր ըստաւածին յարմար պայմաններ ստացաւ: Պոմպէոսը նորան յանձնեց իր ապստամբ որդուն առանց որեւէ պայմանի, որին ապա Տիգրանը կապանքների մատնեց: Փրատէսը, որ այդ միջոցին տիրել էր այն երկիրներին, որ երբեմն պատկանում էին պարթեաններին եւ որ հռովմայեցիք դաշնադրութեամբ պարթեաններին էին թողել, ուղարկեց ղեսպանների Պոմպէոսի մօտ, իր փեսայի համար միջնորդութիւն անելու (658): Բայց Պոմպէոսը կարիք չունենալով այլ եւս պարթեական դաշնակցութեան, մերժեց Փրատէսի խնդիրը եւ ընդհակառակն պահանջեց, որ պարթեանները դուրս գան Կորդուէնէից, ըսայց որովհետեւ պարսիկ ղեսպանները այդ մասին հրահանգ չունէին, ուստի ինքը թուղթ գրեց Փրատէսին, եւ առանց այդ թղթի պատասխանին սպասելու, Աֆրիանոս զօրավարի միջոցով դուրս վճռեց Կորդուէնէից պարթեաց զօրքը եւ երկիրը յանձնեց Տիգրանին: Աֆրիանոսը պարթեաններին հալածեց մինչեւ Արեւիտիս եւ ապա Միջագետքով դարձաւ դէպի Ասորիք, չնայելով որ դաշնադրութեամբ Միջագետքը պատկանում էր պարթեաններին: Պոմպէոսը իւր թղթի մէջ գլացել էր Փրատէսին «արքայից արքայ» տիտղոսը, չնայելով որ առաջ հռովմայեցիք ընդունել էին Փրատէսի «արքայից արքայ» լինելը: Պոմպէոսը այդպէս էր վարուել անշուշտ ի յարգանս Տիգրանի, որ ինքն իրեն միակ «արքայից արքան» է համարում, որի այդ իրաւունքը ճանաչել էին եւ Փրատէսի թոյլ նախորդները: Այն չորս թագաւորներից, որոնց հպատակութեամբ «արքայից արքայ» տիտղոսին էր արժանացել Տիգրանը, մենք ծանաչում ենք երեքին, այն է՝ Ատրպատականի, Ադիաբէնէի եւ Կորդուէնէի թագաւորներին: Չորրորդը երեւի Ուռայի թագաւորն էր, այս ըտուր երկիրներն էլ մի ժամանակ պարթեաններին էին հպատակ, ուստի երբ Փրատէսը

պարթեաց տէրութեան այս կորուստները եւ մանաւանդ այս փոքրիկ թագաւորութիւնները կրկին պարթեական իշխանութեան տակ նուաճեց՝ իրեն սեպհականեց «արքայից արքայ» տիտղոսը, ինչպէս այդ ցոյց են տալիս նորա դրամները: Վարթեաց թագաւորներից վերջինը Միհրդատ առաջինն էր, որ Տիգրանից առաջ կրում էր այդ տիտղոսը: Փրատէսի դրամների վերայ հետեւեալ վերնագիրը կայ. «Արքայից արքայ Արշակ Դիկալոս Եպիփանէս Թէոս Եպատոր Փիլէնէլէն»: Չնայելով Պոմպէոսի արհամարհական վարմունքին Փրատէսը նախ մի ղեսպանութիւն ուղարկեց, պահանջելով դաշնադրութեամբ որոշուած Եփրատի սահմանագիծն ընդունել, բայց Պոմպէոսից ստացաւ մի յանդուգն պատասխան: Երբ Պոմպէոսը Ասորիքում էր 64 թ. զարնանը, Փրատէսը արշաւեց Տիգրանի դէմ ու յաղթեց նորան. զուր տեղը Տիգրանը դիմեց Պոմպէոսի օգնութեան, որ պատասխանեց թէ իրան իրաւունք տուած չէ պարթեանների դէմ պատերազմ դուրս գալու ինքն էլ կարող չէ մի այդպիսի պատերազմի պատասխանատուութիւնն յանձն առնել, քանի որ Միհրդատն ընկճուած չէ: Այսուամենայնիւ երբ Փրատէսն էլ ղեսպաններով միջնորդութեան դիմեց, Պոմպէոսը երեք մարդ ուղարկեց այդ վէճը վճռելու համար: Տիգրանը եւ Փրատէսը այնքան խոհեմ գտնուեցան, որ ընդունեցին հռովմայեցիների վճիռը: Հռովմայեցիք այս ըտուր պատերազմների ընթացքում գրգռել էին պարթեաններին, բայց պարթեանները այնքան տկարացած էին, որ կարող չէին պատերազմ սկսել Հռովմի դէմ: Պարթեական տէրութիւնը հազիւ ներքին եւ արտաքին պատերազմներից ազատուել էր եւ սկսել էր կազդուրուել:

Հարիւր յիսուն տարուց աւելի տևել էր Արշակունիների տան մէջ ներքին համաձայնութիւնը, որպիսի օրինակ չկայ արևելեան բռնակալների հարստութեանց մէջ, Այսու ամենայնիւ Արշակունեաց տան մէջ եւս սկսեց երևիլ դէպի վատը գնալու ձգտումը, որ յատուկ էր բոլոր արևելեան բռնակալութիւններին, Փրատէս Գ-ը, որին պարսկան էին պարթեանները իրանց տէրութեան վերականգնումը, սպանուեցաւ 57 թ. իւր երկուս որ-

դուռն ձեռքով, Սրանցից Որոգէս կամ Հիւրողէս առաջինը ժառանգեց պարթևական գահը, իսկ նրա եղբայր Միհրդատ Գ.ը թագաւորեց Մարաստանում: Գրամները վերայ Որոգէս կոչուում է՝ «Որոգէս արքայից արքայ», իսկ Միհրդատը՝ «մեծ արքայ»: Սրան իւր անգթութեան համար պարթև աւագանին վնասեց Մարաստանից և Որոգէսը մնաց միակ թագաւոր: Միհրդատը փախաւ Լսորիքի կուսակալ Գարինիոսի մօտ, որ նփրատն անցել և Միհրդատին զենքի ուժով իւր գահի վերայ էր ուղում հաստատել, երբ հրաման ստացաւ Պոմպէոսից զանալ եգիպտոս և իւր գահի վերայ բազմեցնել Պողոմէոս ԺԱ.ին, որին այնտեղից դուրս էին քշել: Գարինիոսը Միհրդատից ազատուելու համար յայտնեց նրան, որ բանակից հեռանալ, իսկ զինուորներին յայտարարեց, որ նա փախել է: Միհրդատը միայնակ փորձեց իւր բաղդը և կարողացաւ գահը խլել Որոգէսից, սակայն այս յաղթութիւնը երկարատեւ չեղաւ, որովհետեւ Որոգէսին օգնեց պարթևաց թագաւոր նախարարութեան նահապետ Սուրենը, որին անձնատուր եղաւ Միհրդատը: Որոգէսը իւր իսկ աչքի առաջ սպանել տուաւ եղբորը:

Այս դէպքերը երկարել էին մինչև 54 թ., երբ յանկարծ պարթևական հօդի վերայ երևեցաւ առանց որևէ պատճառի, միմիայն աւարի յուսով՝ Կրասոս հռոմայեցի զօրավարը, թեթեւ յաղթութիւնից յետոյ Կրասոսը Ատրիքում ծմբերեց եւ յաջորդ տարին պատերազմ սկսելով չհետեւեց իւր դաշնակցի՝ հայոց Արտաւազդ Բ. թագաւորի, խորհրդին, որ հրաւիրում էր նորան Հայաստանի վրայով յարձակուիլ պարթևաց տէրութեան վերայ, խոստանալով հռոմայեցի զօրավարին ամեն տեսակ օգնութիւն: Կրասոսը ձմեռոցներից նոր էր դուրս գալիս, երբ պարթև զեսպանները եկան յիշեցնելու նորան իւր անիրաւ վարմունքը, որ առանց հետեւանքի մնաց, Պարթևները ձմեռը պատրաստուել էին, Սուրեն զօրավարը Միջագետքից բռնել էր սակաւթիւ հռոմայեցի պահակներին և մեծ հեծելազօրքով դիմում էր Կրասոսի դէմ: Որոգէս թագաւորը արշաւեց Հայաստանի վերայ, որ Արտաւազդին պատժէ հռոմայեցիներին առաջարկած օգնութեան համար, եւ թոյլ չէլտայ խոստացած օգնութիւնը հասցնելու: 53 թ. յունիս 6-ին Միջագետքում տեղի ունեցաւ այն մեծ ճակատամարտը, որի մէջ Սուրենը մեծ յաղթութիւն տարաւ հռոմայեցից վերայ, նոցա զօրքից սպանելով մօտ 20 հազար մարդ, որոնց մէջ և Կրասոսի որդուն, իրեն Կրասոսին, 10 հազար հօդի էլ գերելով: Սուրենը Կրասոսի գլուխը և ձեռքը

ուղարկեց Հայաստան Որոգէս թագաւորին. յաղթութեան նշանը հասաւ այն ժամանակ, երբ Որոգէս խաղաղութիւն էր հաստատել Արտաւազդի հետ և տօնում էր նրա քրոջ հարսանիքը իւր աւագ որդի Բակուրի հետ: Կրասոսին յաղթող Սուրենի միջակը շատ դառն եղաւ, որովհետեւ Որոգէսը վախենալով նրա մեծ հռչակից, հրամայեց սպանել նրան: Պարթևները չկարողացան իրենց յաղթութիւնից օգուտ քաղել: 52 թ. միայն մի փոքրիկ բանակ ուղարկեցին Լսորիք, որտեղից նրանց հեշտութեամբ յետ վանեց Կասիոսը: Միայն յաջորդ տարին մի մեծ բանակ ուղարկեցին պարթևները արքայորդի թագաւորի և Օգալէս զօրավարի առաջնորդութեամբ դէպի Լսորիք, ուր հռոմայեցիք շատ քիչ գնդեր ունէին և տեղացի ժողովուրդն էլ դժգոհ էր հռոմէական խստութիւնից: Սեպտեմբերին 51 թ. Կասիոսը մի փոքրիկ յաղթութիւն տարաւ պարթևների վերայ, որին զոհ գնաց և Օգալէս, Բակուրը ձմեռեց Լսորիքում: և Միջագետքի սատրապ Օրոնդապատէսը դժգոհ Որոգէսից ապստամբեց և Բակուրին թագաւոր հռչակեց, որից կասկածելով Որոգէսը յետ կանչեց նորան իւր զօրքով Լսորիքից: Եւ յայտնով 50 թ. յուլիս ամսին Լսորիքը մաքրուեցաւ բոլորովն պարթևներից:

(Շարունակելի)

Ն. Բարամանյան.

ՄԱՏԵՆԵԼԻՕՍՈՒԹԻՒՆ.

Die armenischen Handschriften des klostere von Argni (Arghana). Dr. Fr. Müller. — Wien 1896 (Արցնի վանքի հայերէն ձեռագիրները. Գր. Ֆր. Միւլլեր. Վիեննա, 1896). — Յայտնի հայագէտ Փրիդրիխ Միւլլերը ներկայացրել է Վիեննայի Գիտութեանց Ճեմարանին և հրատարակել է այս վերնագրի ներքոյ գերմաներէն թարգմանութեամբ գրքերի այն ցուցակը, որ յառաջ է բերած Հայր Սրուանձտեանի Թորոս Աղբար. Լ. Բ. եր. 383—410: Իւր կողմից նա միայն մի փոքրիկ յառաջարանով տեղեկութիւն է տալիս Արցնի քաղաքի և նորա Բարձրահայեաց ս. Աստուածածին վանքի տեղագրութեան մասին, և հայագետների ուղարկութիւնն է հրաւիրում այդ վանքում պահուած ձեռագիրների կարեւոր (147 հատ) ժողովածուի վերայ. աւելացնում է նաև մի քանի գիտնական ծանօթութիւններ: Արդեօք կոտորածների միջոցին ինչ բաղդի ենթադրուեցան այդ ձեռագիրները, որոնց մէջ եղել են արդարև շատ կարևորները: